ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ ՄԱՀՎԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Դամբարանը, համաձայն տվյալ ժամանակաշրջանի և տարածաշրջանի գաղափարաբանության, մարդկանց ընկալումներում համադրվել է տարբեր հասկացությունների հետ, որոնցով, հավանաբար, պայմանավորվել են նրա ձևն ու կառուցվածքային առանձնահատկությունները: Բրոնզեդարյան և երկաթեդարյան դամբարանների կառուցվածքի հնագիտական հետազոտության արդյունքները համեմատելով բանահյուսական, ազգագրական ու լեզվաբանական տվյալների հետ՝ կարելի է վերականգնել մահվան պատկերացումներով թաղման հնագույն կառույցներին վերագրվող հիմնական նշանակությունները:

ա) Տուն*: Վաղնջական գերեզմանը, բնականաբար, առաղրվել է տան գաղափարին[1]: Այդ երևույթն իր արտահայտությունն է գտել հայ ժողովրդական հանելուկներում. «Մութը տուն, տմբլիկ (խաղաղ) քուն» կամ «Առանց երդիկ տուն, մարդը միջին քուն» և այլն[2]: Ուսումնասիրողների կարծիքով՝ Պաղեստինում հայտնաբերված թրծակավե գետեղարանները (մ. թ. ա. IV հազարամյակի վերջ) պատրաստված են բնակելի տների նմանությամբ[3]: Ուրի երրորդ հարստության արքաների դամբարանները մասնավոր առանձնատների տեսք ունեն[4]: Նույնը կարելի է ասել էտրուսկների թաղման կառույցների մասին[5]: Ռիգվեդայում՝ Վարունային ձոնված հիմներից մեկում, գերեզմանն անվանվում է «հողե տուն»[6]: Ըստ Բ. Պիոտրովսկու՝ ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում խզում էր առաջացել թաղման կառույցի և բնակելի ճարտարապետության միջև (բացառությամբ ուղղանկյուն հատակագծի)[7]: Հ. Մարտիրոսյանն էլ գտնում է, որ դամբարաններն իրենց կառուցվածքով կրկնում են բնակելի տների ճարտարապետա-*

---

[1] О. А. Седакова. Тема «доли» в погребальном обряде (восточно- и южнославянский материал).– В кн.: Исследования в области балто-славянской духовной культуры: Погребальный обряд. М., 1990, с. 57.

[2] *Գ. Սրվանձտյանց. Մանանա, Կ.Պոլիս, 1876, էջ 317, Ս. Բ. Հարությունյան. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 108:*

[3] История древнего Востока, ч. 2. М., 1988, с. 201; В. М. Массон. Первые цивилизации. Л., 1989, с. 102.

[4] Л. Вулли. Ур халдеев. М., 1961, с. 193.

[5] История древнего мира, т. I. М., 1989, с. 374.

[6] Ригведа. Избранные гимны. Пер., комм. и вступит. статья Т. Я. Елизаренковой. М., 1972, VII, 89, 1, с. 321.

[7] Б. Б. Пиотровский. Археология Закавказья. Л., 1949, с. 89.

կան մանրամասները[8]*: Դոլմենները շրջակայքի բնակիչների կողմից անվանվում են «հսկաների տներ» կամ «թզուկների տներ»*[9]*: Ենթադրվում է, որ մինոսյան թոլոսները կառուցվել են բնակելի տների նմանությամբ*[10]*: Բնակելի տների պատճեններն են հյուսիսային Եվրոպայի (Շլեզվիգ-Հոլշտեյն) բրոնզեդարյան II և III փուլերի թաղման սրահները*[11]*: Տան մանրակերտ հանդիսացող անոթ-զետեղարանները մ. թ. ա. I հազարամյակում տարածված են եղել Եվրոպայի տարբեր տարածաշրջաններում: Հին մարդկանց պատկերացումներով, նույնիսկ սովորական կացարանները տեղադրված էին համարվում* աշխարհի կենտրոնում, տիեզերական լեռան *գագաթին, որտեղ հնարավոր է մակարդակների ձեղքվածք (անցում մի մակարդակից մյուսը), այսինքն՝ հաղորդակցում* երկնքի *հետ*[12]*:*

բ) Տաճար*: Առասպելաբանական և հնագիտական բազմաթիվ տեղեկություններ կան դամբարան-տաճար կապի վերաբերյալ: Հայ ժողովրդական վեպում պատմվում է, թե ինչպես Դավիթը հոր գերեզմանի վրա տաճար է կառուցում.*

Իր նետ-աղեղով էդա մարմար քարի բոլոր
Գի՛ծ մի քաշեց, նշան արավ,
Լուսու ձևով խորանների կամար քաշեց,
Սեղանատեղ քաշեց, հիման տե՛ղ էլ քաշեց...[13]

Կամ՝

Ես վանք ըմ բրդի շինըմ,
Միձ վանք մըմ հոր կերեզմընի վրրեն[14]*:*

Հետաքրքիր է, որ ժողովրդի հավաքական հիշողության մեջ պահպանվել է կառույցների աստիճանական զարգացման բնականոն ընթացքը՝ զոհասեղան բաց երկնքի տակ, այնուհետև՝ տաճար[15]*: Հաջիլարում հայտնաբերվել է մասնագետների կողմից սրբարան որակված, մ. թ. ա. V հազարամյակով թվագրվող մի շինություն, որի հատակի տակ գտնվել են կանանց և երեխաների համատեղ թաղումներով մի քանի դամբարաններ*[16]*: Ուսումնասիրողները գտնում են, որ Սթոունհենջի կրոնածիսական բնույթն է մատնանշում նաև այն հանգամանքը, որ դամբանաբլուրները*

---

[8] А. А. М а р т и р о с я н. Раскопки в Головино. Ереван, 1954, с. 46.

[9] Е. Д. Ф е л и ц ы н. Западно-Кавказские дольмены.– Материалы по археологии Кавказа, вып. 9. М., 1904, с. 13; Л. И. Л а в р о в. Дольмены северо-западного Кавказа.– Труды Абхазского института языка литературы и истории, XXXI. Сухуми, 1960, с. 106; В. И. М а р к о в и н. Дольмены Западного Кавказа. М., 1978, с. 3; *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 5:*

[10] Г. Ч а й л д. У истоков европейской цивилизации. М., 1952, с. 50.

[11] Д ж. Г. К л а р к. Доисторическая Европа. М., 1953, с. 160–161.

[12] М. Э л и а д е. Космос и история. М., 1987, с. 154.

[13] *Սասունցի Դավիթ. հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 193:*

[14] *Սասնա ծռեր. ժողովրդական վեպ, աշխատությամբ՝ Ս. Հարությունյանի, Երևան, 1977, էջ 117:*

[15] История древнего мира, с. 113.

[16] В. М. М а с с о н. *Նշվ. աշխ., էջ 106:*

տեղադրված են նրա շրջակայքում, ինչպես քրիստոնեական գերեզմանատները՝ եկեղեցիների շուրջը[17]: Խեթական մշակույթում հայտնի են, այսպես կոչված, «քարե տները»՝ արքաների հոգեհանգստյան տաճարները: Ավագանու դամբարանները Կնոսոսում նշված նշանակությամբ ոչ մեծ տաճարների տեսք են ստանում մ. թ. ա. XVI դարում[18]: Մալթայի մեգալիթյան քաղաքակրթության արտահայտություններից է Վալետտայի մոտ գտնված ժայռափոր դամբարանը, որի կառուցվածքում վերամարմնավորված են տաճարային ճարտարապետությանը բնորոշ բազմաթիվ հատկանիշներ[19]: Ինչ վերաբերում է եգիպտական բուրգերին, ապա գիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որ փարավոնի դամբարանը միաժամանակ արքայաստծո տաճարն էր նաև: Այսպես՝ Աբիդոսում, Մեթի I փարավոնի տաճարային համալիրի ետին պլանում, արհեստական և ծառապատ բլրի վրա տեղակայված էր սրբազան տարածքը՝ Օսիրիոնը՝ Օսիրիսի գերեզմանով հանդերձ: Բլրի շուրջը խրամատ էր փորված, որը լցվում էր ջրով[20]: Փարավոնների դամբարան-բուրգերը երբեմն նույնիսկ «նսեմացնում էին տաճարների փառքը»[21]:

Հին աշխարհում դիտվում է նաև հակառակ երևույթը. ոչ միայն տաճարներն են կառուցվել երևելի մարդկանց թաղման վայրերում, այլև ականավոր ննջեցյալները թաղվել են որևէ աստծո տաճարում: Մարիում, օրինակ, Իշտարի տաճարի տակ հայտնաբերվել է արքայական երեք դամբարան[22]: Վաղուց է հայտնվել այն կարծիքը, որ հնում գերեզմանատները գտնվել են քրիստոնեական տաճարների բակերում կամ շրջակայքում և թաղումներ են կատարվել հենց եկեղեցիների մեջ: Հայտնի են վանական մի շարք համալիրներ, որոնցում թաղվել են հայ թագավորները և իշխանները[23]: Վերջապես, պատահում է և այնպես, որ հին դամբարանը վերածվում է մատուռի[24]: Օսեթիայի սրբարանների ցուցակում հիշատակվում է նաև դոլմենաձև քարակերտ մի կառույց՝ այսպես կոչված «Սոսլանի գերեզմանը»[25]:

գ) Արգանդ*: Ազգագրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք մշակույթներում գերեզմանը հավասարեցվում է արգանդին, քանի որ երկուսն էլ զուգորդվում են հողի՝ պտղաբերության աղբյուրի և մնացորդները կլանողի հետ: Պայմանանշանների միջավայրում նույնպես, սահմանային խորհրդանիշները միաժամանակ ներկայացնում են և՛ գերեզմանը, և՛ արգանդը[26]: Հայերը թաղումը դիտում էին որպես*

---

[17] Д ж. Х о к и н с, Д ж. У а й т. Разгадка тайны Стоунхенджа. М., 1973, с. 105.

[18] История древнего Востока, с. 148, 198.

[19] Г. Ч а й л д. *Նշվ. աշխ., էջ 337:*

[20] Э. Ц е р е н. Библейские холмы. М., 1966, с. 365.

[21] Э. Ц е р е н. Лунный бог. М., 1976, с. 178.

[22] Г. Ч а й л д. Древнейший Восток в свете новых раскопок. М., 1956, с. 229.

[23] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում.– «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի», 1928, - 3, էջ 96:*

[24] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 5:*

[25] Ж. Д ю м е з и л ь. Осетинский эпос и мифология. М., 1976, с. 112–113.

[26] В. Т э р н е р. Символ и ритуал. М., 1983, с. 170, 236.

«վերադարձ մայր երկրի արգանդը»[27]*: Հուղարկավորման նման գաղափարաբանությունը շրջանառվում էր մի շարք այլ տարածաշրջաններում ևս: Օրինակ՝ Կոգի ցեղախմբի անդամների պատկերացմամբ՝ թաղման ժամանակ հանգուցյալը, անցնելով իր կյանքի ճանապարհը հակառակ ուղղությամբ, վերադառնում է արգանդի մեջ*[28]*: Կարծում ենք, որ ինչպես Հայկական լեռնաշխարհում, այնպես էլ դրա սահմաններից դուրս գտնվող բրոնզեդարյան թաղման կառույցներից, իրենց ձևով, գերեզման-արգանդ համադրությանը լավագույնս համապատասխանում են կատակոմբները:*

դ) Կոգի*: Տեղադրվելով «կոգու» վրա, ինչպես և «ձվի» մեջ՝ հանգուցյալը հաղորդակից էր դարձվում* աշխարհի արարչագործությանը*: Շատ ժողովուրդների առասպելներում այնկողմնային աշխարհը հանդես է գալիս որպես մեռյալների կոգի*[29]*: Կարելա-ֆիննական էպոսում ստորերկրյա աշխարհը՝ Տուոնելիի մեռյալների կացարանը, գտնվում է Մանալի գետի պղտոր ջրերի մեջ, մի սև կոգու վրա*[30]*: Միջագետքյան հավատալիքներով, մահվան ջրերը բաժանում են բնակելի երկիրն այն կոգուց, որտեղ ապրում է անմահ Ուտնափիշտին*[31]*: Դամբանադաշտերին կոգիների վրա տեղ հատկացնելու սովորությունը Եվրոպայում գոյություն է ունեցել դեռևս միջին քարեդարում (մեզոլիթ)*[32]*:*

ե) Նավ*: Դամբարանը հնագույն պատկերացումներում համադրվել է նաև նավի հետ: Հնդեվրոպական մի շարք լեզուներում* նավը (*nau-s*) *ստացել է իր երկրորդ նշանակությունը*՝ մահ, գերեզման, *քանի որ անցյալում ենթադրում էին, որ այնկողմնային աշխարհը ջրով անջատված է ողջերի աշխարհից և այնտեղ կարելի է հասնել միայն նավով*[33]*: Հին հայերենում ևս* տապան *բառը գործածված է երկու նշանակությամբ*՝ նավ *և* գերեզման, դամբան[34]*: Բացառված չէ, որ Արագածոտնի երկու դամբարանադաշտերի «Վերին նավեր» և «Ներքին նավեր» անվանումները կապված լինեն* նավ *հասկացությունը* գերեզման *նշանակությամբ օգտագործելու հետ: Հնարավոր է, որ ննջեցյալին* նավի *վրա ամփոփելով՝ հները նրան հաղորդակից էին դարձնում* աշխարհի արարչագործությանը, *որը,*

---

[27] *Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 209:*

[28] М. Э л и а д е. *Նշվ. աշխ., էջ 213:*

[29] Э. Ц е р е н. Лунный бог, с. 251–252.

[30] *Կալևալա. Կարելա-ֆիննական էպոս, Երևան, 1972, ԺԶ:*

[31] Эпос о Гильгамеше («О все видавшем»). Пер. с аккадского и комм. И. М. Дьяконова. М.–Л., 1961, с. 193.

[32] А. Б у т р и м а с, А. Г и р и н и н к а с. Старые местные и новые погребальные обряды в неолите Литвы.– В кн.: Исследования в области балто-славянской духовной культуры. Погребальный обряд. М., 1990, с. 151.

[33] Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы, т. II. Тбилиси, 1984, с. 825; В. Я. П р о п п. Русские аграрные праздники. Опыт историко-этнографического исследования. Л., 1963, с. 20; Младшая Эдда. Издание подготовили О. А. Смирницкая и М. И. С т е б л и н-К а м е н с к и й. Л., 1970, с. 227; Г. Ч а й л д. У истоков европейской цивилизации, с. 349; В. И. М а р к о в и н. *Նշվ. աշխ., էջ 307:*

[34] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, 1979, էջ 373:*

միևնույն ժամանակ, ենթադրում էր հանգուցյալի վերածնունդը[35]: Կայմի փոխարեն կենաց ծառ ունեցող մակույկը այն նավն է, որը մեռյալներին տանում է անդրաշխարհ կամ երկինք[36]: Այնկողմնային աշխարհ փոխադրելու համար է, ակներևաբար, նախատեսված Օդհինի և թզուկների հրաշք նավակը՝ միշտ համընթաց քամի ունեցող Սկիդբլադնիրը, որը կարելի է թաշկինակի նման ծալել և գրպանը դնել[37]: Հիշյալ նպատակին էր ծառայում նաև Մանալի դստեր նավակը, որով Վեյնեմեյնենը մտադիր էր հասնել ստորերկրյա աշխարհ[38]:

Անկախ հուղարկավորման կառույցին վերագրվող նշանակությունից՝ թաղման ծեսի կարևորագույն խնդիրներից էր ննջեցյալի ծիսական մաքրությունն ապահովելը: Դրան միտված տարբեր արարողությունները վերականգնելու հնարավորություն են ընձեռում հնագիտական պեղումներով հայտնաբերված տվյալները: Այսպես՝ Քարաշամբի մեծ դամբանաբլուրի թաղման հարթակի հարավարևմտյան մասում 0,10 մ - հաստությամբ մոխրաշերտ է հայտնաբերվել: Այդ հատվածում, հավանաբար, ծիսական խարույկ է վառվել[39]: Ածխի կտորներ են ի հայտ եկել Արուճի I և II դամբանաբլուրների թաղման սրահներում[40], Նորաբացի կատակոմբներում[41]: Շիրակավանի -41 դամբարանի հուղարկավորման խցում զգալի քանակությամբ փայտածուխի մնացորդներ են գտնվել[42]: Աշտարակի Խոջաբաղերի դամբարանախմբի -1, 2 և 6 թաղումների խցերում հայտնաբերվել են փոքր մակերեսով մոխրաշերտեր և ածխիկներ, որոնք կարող են լինել շիրիմների ծիսական մաքրագործման նպատակով արված կրակների հետքեր: -2 դամբանաթմբում՝ խցից դուրս, նույնպես մոխրաշերտ է ի հայտ եկել: Մրով է ծածկված Արթիկի -238 դամբարանի առաստաղը, որը հիմք է տվել Տ. Ս. Խաչատրյանին ենթադրելու, որ դամբանախուցը կրակով «մաքրվել է չար ոգիներից»[43]: Այս ծիսակատարությունը Հայաստանում գոյատևել է ավելի ուշ դարաշրջաններում ևս: Օշականի հելլենիստական դամբանադաշտի գրեթե բոլոր դամբարաններում վառված հողաշերտի

---

[35] В. Н. Т о п о р о в. О космологических источниках раннеисторических описаний.– Ученые записки Тартусского гос. университета, вып. 308. Труды по знаковым системам, 6. Тарту, 1973, с. 114–115.

[36] Э. Ц е р е н. Лунный бог, с. 179.

[37] Старшая Эдда. Древнеисландские песни о богах и героях. Пер. А. И. Корсуна. Редакция, вступит. статья и комм. М. И. Стеблин-Каменского. М.–Л., 1963, с. 39, 225; Ж. Д ю м е з и л ь. Верховные боги индоевропейцев. М., 1986, с. 142.

[38] *Կալևալա, ԺԶ:*

[39] В. Э. О г а н е с я н. Раскопки Карашамбского могильника в 1987 г.– Археологические работы на новостройках Армении, I. Ереван, 1993, с. 27.

[40] *Գ. Ա ր ե շ յ ա ն, Հ. Ս ի մ ո ն յ ա ն, Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Հայագիտական կենտրոնի 1976 թվականի դաշտային հնագիտական աշխատանքները.– «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ), 1977, -3, էջ 272: Գ. Ա ր ե շ յ ա ն, Հ. Ս ի մ ո ն յ ա ն, Գ. Ս ա ր գ ս յ ա ն, Գ. Ք ո չ ա ր յ ա ն, Հ. Օ հ ա ն յ ա ն. Հայագիտական կենտրոնի 1977-1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները.– ԲԵՀ, 1979, -2, էջ 22:*

[41] Г. Е. А р е ш я н. Норабац–новый памятник эпохи бронзы.– Археологические открытия (*այսուհետև՝* АО) 1979 года. М., 1980, с. 423.

[42] *Ռ. Մ. Թ ո ր ո ս յ ա ն, Օ. Ս. Խ ն կ ի կ յ ա ն, Լ. Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Հին Շիրակավան. Երևան, 2002, էջ 25-26:*

[43] Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 149.

առկայությունը հուշում է, որ դրանցում «մաքրող» կրակ է վառվել[44]: Տեղին է հիշել, որ հայոց մեջ ածուխին վերագրվում էր «քաշկերին» վանող զորություն[45]: Հիշյալ արարողության հետքեր են հայտնաբերվել Վրաստանի[46], Օսեթիայի[47], Աբխազիայի[48], Արևմտյան Եվրոպայի[49] տարբեր ժամանակաշրջանների դամբարաններում: Չի բացառվում դամբարանի մաքրագործման նպատակով ծծմբի գործածությունը, քանի որ այն հին աշխարհում հայտնի էր որպես սրբագործման միջոց[50]:

Մաքրագործման ծիսակատարության համակարգում ջրի օգտագործման անուղղակի վկայություն է համարվում գետաքարերի առկայությունը դամբանասրահում, դամբանաբլրի լիցքի մեջ, ինչպես նաև դրանց օգտագործումը կրոմլեխը կառուցելիս (հատկապես այն վայրերում, որոնց մերձակայքում գետաքարեր չկան): Այս տեսակետի կողմնակից Տ. Ս. Խաչատրյանը գտնում էր, որ ջրին վերագրվել է նաև թաղման համալիրը չար ուժերի վնասակար ազդեցությունից զերծ պահելու հատկություն: Թեև Արթիկի դամբարանադաշտի տարածքում ընդհանրապես գետաքարեր չկան, սակայն դրանք տեղադրված են եղել բազմաթիվ դամբարաններում: Ցավոք, Արթիկի կատակոմբներում գլաքարերի տեղադրության հարցում որևէ օրինաչափություն չի նկատվել[51]: Գոլովինոյի դամբարաններից մեկում գտնվել է հինգ գետաքար[52]: Օշականի դամբանադաշտի մ. թ. ա. VIII–VII դարերով թվագրվող մի դամբարանում ննջեցյալի գլխի տակ գտնվել է գետաքար, որը, Ս. Ա. Եսայանի կարծիքով, վկայում է հանգուցյալին ջրով լողացնելու մասին[53]: Աշտարակի Խոջաբաղերի -1 դամբարանի նախամուտքի պատի «գաղտնարանում», ճզմված լայնաբերան սափորի միջից, պեղումներով հայտնաբերվել է կանաչ գույնի բոնցքաչափ մի գլաքար, որի առկայությունը, հավանաբար, նույնպես կապված է ջրի և

---

[44] *Ս. Ե ս ա յ ա ն, Ա. Կ ա ն ե ղ յ ա ն. Օշականի անտիկ դամբարանների ձևերն ու կառուցվածքը.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև ԼՀԳ), 1986, -1, էջ 70:*

[45] *Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 303, 307:*

[46] В. В. Ч и х л а д з е, Ц. В. Р о б а к и д з е. Раскопки Жинвальского могильника.– АО 1985 года. М., 1987, с. 545.

[47] А. Х. С л а н о в. Исследование Аркнетского могильника.– АО 1979 года, с. 416; *Ն ո ւ յ ն ի* ՝ Раскопки Кливанского могильника.– АО 1982 года. М., 1984, с. 429; Б. В. Т е х о в. Раскопки Тлийского могильника.– АО 1979 года, с. 417.

[48] В. И. М а р к о в и н. *Նշվ. աշխ., էջ 226:*

[49] Г. Ф. Н и к и т и н а. Погребальный обряд культур полей погребений Средней Европы в I тысячелетии до н. э.–первой половине I тысячелетия н. э.– В кн.: Погребальный обряд племен Северной и Средней Европы в I тыс. до н. э.–I тыс. н. э. М., 1974, с. 14, 25; В. А. М о г и л ь н и к о в. Погребальный обряд культур III в. до н. э.–III в. н. э. в западной части Балтийского региона.– В кн.: Погребальный обряд племен Северной и Средней Европы в I тысячелетии до н. э.–I тысячелетии н. э., с. 133–225.

[50] *Ողիսական, հին հունարենից թարգմանեց Հ. Համբարձումյանը, Երևան, 1988, էջ 358, 402:*

[51] Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака, с. 148–149; *Э б х Ы Э З*՝ Артикский некрополь: каталог. Ереван, 1979, с. 9.

[52] *Հ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Դամբարանի պեղումները Գոլովինո գյուղում.– Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ. V, Երևան, 1959, էջ 16:*

[53] С. А. Е с а я н. Работы Ошаканской экспедиции.– АО 1985 года, с. 561.

մաքրագործման գաղափարի հետ (դամբարանախմբի տարածքում նման քարեր չկան): Արթիկի -417 դամբանում ևս կոպիճը դրված է եղել խեցանոթի (այս դեպքում՝ քերեղանի) մեջ: Հետաքրքիր է, որ ռումինական ժողովրդական հավատալիքներով, գետաքարերը դամբարան են դրվել ննջեցյալին դարձորյակ (փոխակերպուկ) դառնալուց զերծ պահելու նպատակով[54]: Ավելացնենք, որ արիացիները որպես ախտահանիչ միջոց գործածում էին նաև կովի մեզը, որն ամոնիակ է պարունակում[55]:

Հայկական լեռնաշխարհում շարունակաբար կիրառվել է հեթանոսական դամբարաններում օխրա սփռելու արարողությունը: Այսպես, «կարմիր ներկի հետքեր» են հայտնաբերվել Նախճավանի Մոխրաբլուրի պղնձեքարեդարյան դամբարաններից մեկի հատակին[56]: Ուչթեփեի կուր-արաքսյան մշակույթին պատկանող -3 դամբանաբլրի թաղման սրահի հատակն առատորեն ծածկված է եղել օխրայի շերտով[57]: Կարմիր է ներկված եղել Ճալայի (Ալգետի ավազան) վաղբրոնզեդարյան դամբարաններից մեկի հատակը[58]: Լոռի բերդի միջինբրոնզեդարյան -83 դամբարանի հուղարկավորման խցում գտնվել են օխրայի կտորներ[59]: Հնագույն ակունքներ ունեցող այս սովորությունը գոյատևել է զարգացած բրոնզի դարաշրջանում: Քեթիի -24 և -25 դամբարանների հատակին հայտնաբերվել են օխրայի հետքեր[60], Խոջալիի փոքր դամբանաբլուրներից մեկում գտնվել են օխրայի կտորներ[61], օխրա է շաղ տված եղել Բորսունլուի դամբարանների հատակին[62], դրա որոշ մնացորդներ են հայտնաբերվել Ապարանի ջրամբարի ափի -2 դամբարանում տեղադրված խեցանոթների վրա[63] և այլն: Հայտնի են նաև բազմաթիվ դեպքեր, երբ օխրա է ցանվել ննջեցյալի դիակի վրա, ըստ երևույթին, այն չար ուժերից պահպանելու նպատակով՝ մաքրագործման գաղափարի և վերածննդի պատկերացումների հետ կապված: Հիշենք, որ կարմիր և դեղին գույները ծիսականորեն համարժեք են[64], և կարմիր ներկը դամբարաններում կարող էր հանդես գալ որպես կրակի խորհրդանիշ[65]:

---

[54] Т. Н. Свешникова. Волк в контексте румынского погребального обряда.– В кн.: Исследования в области балто-славянской духовной культуры: Погребальный обряд. М., 1990, с. 132.

[55] М. Бойс. Зороастрийцы. Верования и обычаи. М, 1987, с. 13.

[56] О. А. Абибуллаев. Энеолит и бронза на территории Нахичеванской АССР. Баку, 1982, с. 45.

[57] А. А. Иессен. Раскопки большого кургана в урочище Уч-Тепе.– Материалы и исследования по археологии СССР, ¹ 125. М.–Л., 1965, с. 170.

[58] Н. Н. Тушишвили, Дж. Ш. Амиранашвили. Археологические раскопки в зоне строительства Алгетского водохранилища.– В кн.: Археологические исследования на новостройках Грузинской ССР. Тбилиси, 1982, с. 67.

[59] *Ս. Դևեջյան. Լոռի բերդ, II (միջին բրոնզ), Երևան, 2006, էջ 67:*

[60] Л. А. Петросян. Раскопки памятников Кети и Воскеаска. Ереван. 1989, с. 56.

[61] К. Х. Кушнарева. Ходжалинский могильник.– ИФЖ, 1970, ¹ 3, с. 110.

[62] Г. Ф. Джафаров. Исследования у сел. Борсунлу.– АО 1983 года. М., 1985, с. 485.

[63] Ф. М. Мурадян. Раскопки в Апаранском районе.– АО 1986 года. М., 1988, с. 471–472.

[64] В. Тэрнер. *Նշվ. աշխ., էջ 72:*

[65] В. А. Могильников. *Նշվ. աշխ., էջ 159: Ի դեպ, օջախներում հայտնաբերված կարմիր օխրան, ըստ երևույթին, նույնպես խորհրդանշել է կրակը (*А. Бутримас, А. Гирининкас. *Նշվ. աշխ., էջ 153):*

Եթե նկատի ունենանք, որ օխրան երբեմն սփռվում էր նաև ուղեկցող գույքի վրա, ապա սխալ չի լինի ենթադրել, որ դամբանասրահներում և դրանց նախամուտքերում օխրա սփռելու արարողությունը վերաբերել է թաղման համալիրի մաքրագործման ծիսակատարության համակարգին:

Դամբանաբլուրներում՝ ներառյալ դամբանասրահներն ու դրանց նախամուտքերը, որպես կանոն սփռված են վանակատի և կայծքարի ծլեփներ ու բեկորներ, որոնց թիվը բրոնզեդարյան թաղման համալիրներում երբեմն հարյուրների է հասնում: Դամբանաթմբով մեկ վանակատի և կայծքարի բեկորներ ու ծլեփներ սփռելը՝ որպես ծիսական արարողություն, դիտարկված և լուսաբանված է հետազոտողների կողմից[66]: Այդ առարկաներին, ամենայն հավանականությամբ, վերագրվում էր փորձանքը խափանելու, չար ոգիներին և նրանց վնասաբեր ազդեցությունները վանելու հատկություն, ուստի, հիշյալ արարողությունը կարելի է համարել դամբարանի պահպանական ծիսակատարության համակարգին պատկանող: Այս արարողությունը Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել առնվազն պղնձեքարեդարում[67] և անընդմեջ գոյատևել է մինչև հեթանոսության ավարտը: Իհարկե, վանակատը և կայծքարը դամբարանում կարող էին հայտնվել նաև հանգուցյալի աճյունի պահպանության ծիսակարգի, զոհաբերված կենդանիների ծիսական սպանդի հետ կապված[68] կամ ննջեցյալին ողբալու արարողությունների արդյունքում[69]:

Նախքան թաղման ծեսով դամբարանի կառուցվածքի պայմանավորվածությանն անդրադառնալը, համառոտ ներկայացնենք թաղման համալիրի շինարարության հաջորդականության վերաբերյալ մեր պատկերացումը[70]: Դամբարանի կառուցման տարածքն ընտրվելուց հետո եզրագծվել, ապա մաքրագործվել է սրբազան շրջանը, շարվել է կրոմլեխը, կառուցվել և մաքրագործվել են դամբանասրահը և նախամուտքը: Այնուհետև տեղադրվել են ծածկասալերը, կատարվել է թաղումը, փակվել մուտքը, հետո

---

[66] Б. А. Куфтин. Археологические раскопки в Триалети, I. Тбилиси, 1941, с. 101, 121; Б. В. Техов. Тлийский могильник (комплексы XVI–X вв. до н. э.). Тбилиси, 1980, с. 52–53; А. Е. Симонян. Обсидиан и кремень как атрибуты погребального обряда.– Вопросы изучения армянской народной культуры (культура и язык). VIII Конференция молодых ученых. Тезисы докладов. Ереван, 1988, с. 79–81; *Գ. Թումանյան. Աշտարակի Խոջաբաղերի դամբանաթումբը դամբանաբլրային մշակույթի համատեքստում.– ՊԲՀ, 2008, -1, էջ 195 և այլն:*

[67] О. А. Абибуллаев. *Նշվ. աշխ., էջ 39-50: Օ. Ս. Խնկիկյան. Սյունիքի մ. թ. ա. IV-I հազարամյակի թաղման ծեսի մեկնության փորձ.– ԲԵՀ, 1993, -3, էջ 126:*

[68] *Գ. Ս. Թումանյան. Աշտարակի Խոջաբաղերի ուշբրոնզեդարյան դամբարանները.– ՊԲՀ, 1997, -2, էջ 262:*

[69] *Նկատի ունենք այն սովորությունը, որի համաձայն հուղարկավորության մասնակիցները՝ ի նշան վշտի, արյունոտելու աստիճան քերծում էին իրենց դեմքը վանակատի կամ կայծքարի ծլեփներով և դրանք նետում գերեզման (տե՛ս* С. И. Макалатия. Раскопки Дванского могильника.— Советская археология (*այսուհետև՝* СА), 1949, XI, с. 234—235)*:*

[70] *Առանց այս խնդրին անդրադառնալու, հաջորդ շարադրանքը կարող էր անհասկանալի լինել: Հարցի առնչությամբ առավել ընդարձակ տե՛ս Գ. Թումանյան. Հայաստանի ուշբրոնզեդարյան դամբարանների կառուցվածքը.– ՊԲՀ, 2003, -1, էջ 182, 184:*

բարձրացվել է դամբանաբլուրը և տեղադրվել հուշակոթողը: Թաղման համալիրի տարածքի սրբագործումը խորհրդանշվում էր հենց այն կառուցելու գործողությամբ: Դամբանային կառույցի յուրաքանչյուր տարրը պայմանավորված էր ծեսի պահանջներով, իսկ թաղման շինության բուն կառուցվածքը նպաստում էր ննջեցյալի ծիսական մաքրությունն ապահովելուն[71]*:*

Հետազոտողները տարբեր կերպ են մեկնաբանել դամբարանն օղակող սրբազան շրջանի (քարե, հողե, փորված և այլն) իմաստն ու նշանակությունը: Նրանք գտնում են, որ կրոմլեխի շրջանաձև լինելը հուշում է, որ այն խորհրդանշում է արևը[72]*, արևի տարեկան շրջափուլը*[73]*, դա արեգակի նշանն է՝ պատկերված երկրի վրա*[74]*: Դա կարող էր խորհրդանշել նաև հորիզոնի շրջագիծը*[75]*: Չվիճարկելով հայտնված տեսակետները, հիշեցնենք, որ հանդիպում են նաև բազմանկյուն, քառանկյուն, ինչպես և հատակագծում ուղիղի և կորի համադրությամբ կազմված կրոմլեխներ:*

Դամբարանների կառուցվածքը, անշուշտ, առաջին հերթին պայմանավորված է դրանք կերտողների աշխարհայացքով, այնկողմնային աշխարհի մասին ունեցած նրանց պատկերացումներով: Եզրագծելով դամբարանի կրոմլեխը, հները, հավանաբար, սահման էին անցկացնում այս *և* այն *աշխարհների միջև*[76]*: Հնարավոր է, որ վեդայական թաղման հիմներից մեկում խոսվում է սրբազան շրջանի մասին.*

-Այս անջրպետը ես հաստատում եմ ողջերի համար:
Թող որ նրանցից ոչ ոք չհասնի այս նշանին[77]*:*

Որևէ տարածքի շուրջն ակոս անցկացնելը պատնեշում էր այն չար ուժերից[78]*: Փակ գծով օղակված տարածքը դառնում էր անձեռնմխելի*[79]*, օժտվում էր հմայական զորությամբ*[80]*: Չարը խափանելու նպատակով կարող էին թաղման համալիրի համար նախատեսված հողակտորի շուրջը պտտել կովին կամ կրակը*[81]*:*

Ուսումնասիրողները տարբեր մոտեցումներ են ցուցաբերում դամբանասրահի ծածկասալերի համակարգում անցք(եր)ի առկայությանը: Ենթադրվում է, որ Կրետեի, Կիկլադյան կղզիների և Ատտիկայի վաղ խմբի դամբարանների տանիքների անցքերը ծառայել են դրանց միջով ննջեցյալներին

---

[71] В. И. М а р к о в и н. *Նշվ. աշխ., էջ 210:*

[72] J. D é c h e l e t t e. Manuel d'archéologie préhistorique celtique et gallo-romaine, II. Paris, 1928, p. 414–415.

[73] Ю. А. Ш и л о в. Космические тайны курганов. М., 1990, с. 63.

[74] И. И. М е щ а н и н о в. Кромлехи.– Известия Государственной академии истории материальной культуры, т. VI, вып. III. Л., 1930, с. 27.

[75] Ю. А. Ш и л о в. *Նշվ. աշխ., էջ 85:*

[76] В. С. О л ь х о в с к и й. Погребально-поминальная обрядность в системе взаимосвязанных понятий.– СА, 1986, ¹ 1, с. 68.

[77] Ригведа, X, 18, 4.

[78] В. Г. А р д з и н б а. Ритуалы и мифы древней Анатолии. М., 1982, с. 158.

[79] *Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 303:*

[80] В. И. М а р к о в и н. *Նշվ. աշխ., էջ 223:*

[81] Ригведа, с. 354.

դամբանասրահ իջեցնելում[82]: Այլ միտք էլ է հայտնվել, ըստ որի ծածկասալերի անցքերն արվել են դրանց տեղափոխումը դյուրին դարձնելու նպատակով[83]: Անցքերի առկայությունը ծածկասալերի վրա կամ դրանց միջև, իհարկե, դիտարկված է նաև ծիսական տեսանկյունով: Դրանք համարվում են «պատուհաններ՝ հանգուցյալի հոգու հետ հաղորդակցության համար»[84] կամ ընդհանուր ձևով նշվում է պաշտամունքային նպատակներով անցքերի գործածության հանգամանքը[85]: Մենք կողմնակից ենք այն կարծիքին, որ սրանք կարող էին օգտագործվել ննջեցյալների հիշատակին նվիրված տարբեր ծիսակատարությունների ժամանակ հեղումներ կատարելու համար: Թվում է, թե հայ ժողովրդական վեպում ակնարկներ կան դամբարանի ծածկասալի վրա անցքի առկայության մասին.

Տեսավ, որ էնդեղ միծ, ահագին մարմար քար կա.
Մարմար քարի կեսն ճղվիր ի, լուս մեչեն կբուխա:

Կամ՝

Էդա քարեն ճրագի բուխ կըլնը.
Էդ ախչիկ էլավ կինաց էն ումարով, թի ժամն ի[86]:

Թաղման կառույցի հիմնական տարրերից մեկի՝ դամբանասրահի, ուղղվածությունը ևս կապված է աշխարհայացքային պատկերացումների հետ: Վերին նավեր և Շամիրամի դամբարանադաշտերի թաղման խցերի կողմնորոշվածությունից ելնելով՝ Հ. Ե. Սիմոնյանը ենթադրում է, որ հյուսիսային կողմը սրբազան է համարվել[87]: Դամբարանի մուտքը տեղադրելով հյուսիսային կողմում, այն կառուցողները, հավանաբար, ենթադրել են, որ անդրշիրիմյան աշխարհ հնարավոր է իջնել հյուսիսից: Հոմերոսյան դարաշրջանի հույները կարծում էին, որ այնկողմնային աշխարհի մուտքը գտնվում է հյուսիսում: Հադեսի թագավորություն իջնելու համար Ոդիսևսն ուղևորվում է կիմերների հավերժ խավարի մեջ ընկղմված

[82] Г. Ч а й л д. У истоков европейской цивилизации, с. 50, 87.

[83] Ф. И. Т е р - М а р т и р о с о в. Раскопки в Ширакаване.– АО 1982 года. М., 1984, с. 446.

[84] А. Е. С и м о н я н. Культура эпохи средней бронзы северных районов Армянского нагорья.– Автореф. дисс. на соискание уч. ст. канд. ист. н. Л., 1984, с. 9.

[85] Ф. И. Т е р - М а р т и р о с о в. *Նշվ. աշխ., էջ 446:*

[86] *Սասնա ծռեր. ժողովրդական վեպ, էջ 445, 507:*

[87] *Հ. Ե. Ս ի մ ո ն յ ա ն. Նոր դիտողություններ բրոնզի և վաղ երկաթի դարի դամբարանների կողմնորոշման վերաբերյալ.– Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր, Երիտասարդ գիտնականների VII կոնֆերանս, զեկուցումների թեզիսներ, VII, Երևան, 1986, էջ 7-9:*

երկիրը[88]: Մեծ մասամբ հյուսիսային կողմում են տեղադրված եգիպտական բուրգերի մուտքերը[89]:

Դամբանասրահների՝ դեպի արևմուտք և դեպի հարավ կողմնորոշումները նույնպես պայմանավորված են այնկողմնային աշխարհի մասին ունեցած պատկերացումներով: Համաձայն Աթհարվավեդայի՝ մեռյալների թագավորությունը *գտնվում էր հարավում, իսկ* աստվածների տիրույթը *տեղադրված էր արևելքում կամ հյուսիս-արևելքում[90]: Ըստ Յա. Ի. Հումմելի՝ Խանլարի -2 դամբանաբլուրի բոլոր չորս թաղման խցերի երկայնական առանցքները հատվում են մի կետում[91]: Բ. Բ. Պիոտրովսկու կարծիքով՝ կետը, որի նկատմամբ կողմնորոշված են միևնույն դամբանաբլրի տարբեր դամբանասրահները, այն տեղն է, որտեղ տեղադրվել է զոհարանը և տնկվել սրբազան թուփը կամ ծառը[92]: Աշխարհի չորս կողմերից որևէ մեկով թաղման խցի ճշգրիտ ուղղվածության հանգամանքը հուշում է, որ դամբարանը կառուցվել է գարնանային կամ աշնանային գիշերահավասարի օրերին, իսկ հիշյալ առանցքներից որոշ շեղումները կարող էին առաջանալ հորիզոնում արևածագի միջակայքի փոփոխության հետևանքով: Միայն չի լինի ենթադրել, որ մեր նախնիներն ուղղությունները հաշվարկել են այն կետից, որտեղ արևի սկավառակը ստորին մասով հպվել է հորիզոնին: Համանման ձևով են վարվել նաև Սթոունհենջի շինարարները[93]: Ասվածը, ակնհայտորեն, բավարար է ենթադրելու, որ միևնույն դամբարանադաշտի թաղման կառույցների միատեսակ կողմնորոշումը միայն տեղի խնայողությամբ բացատրելը[94] դժվար թե հիմնավորված լինի:*

Հարկ է երկու խոսք ասել նաև դամբանաբլրային թաղումների առնչությամբ: Մ. Գիմբուտասի կարծիքով՝ դրանք բնորոշ են հնդեվրոպական մշակույթներին[95]: Դամբանաթմբերը հազվագյուտ չեն կուր-արաքսյան մշակույթի թաղման ծեսում: Մ. թ. ա. IV հազարամյակի երկրորդ կեսում սրանք արդեն հայտնի են Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում և գոյատևում են մինչև քրիստոնեական ժամանակաշրջանը:

---

[88] *Ողիսական, XI: Կիմերները առասպելական մի ժողովուրդ էին, որոնք, ըստ հին հույների պատկերացման, ապրում էին բնակելի աշխարհի հյուսիսում: Դեպի* աշխարհի ծայրը *կատարվող ճանապարհորդությունների վերաբերյալ առասպելները, ընդհանրապես, առնչվում էին անդրաշխարհի աստվածությունների պաշտամունքին (տե՛ս* Л. А. Е л ь н и ц к и й. Киммерийцы и киммерийская культура.– Вестник древней истории, 1949, ¹ 3, с. 20).

[89] Э. Ц е р е н. Библейские холмы, с. 379.

[90] Атхарваведа. Избранное. Пер., комм. и вступ. ст. Т. Я. Елизаренковой. М., 1976, с. 27.

[91] Я. И. Г у м м е л ь. Курган ¹ 2 близ Ханлара (дополнительные сведения).– Краткие сообщения Института истории материальной культуры, вып. XXIV. М.–Л., 1949, с. 55.

[92] Б. Б. П и о т р о в с к и й. *Նշվ. աշխ., էջ 89:*

[93] Д ж. Х о к и н с, Д ж. У а й т. *Նշվ. աշխ., էջ 151:*

[94] Л. В у л л и. *Նշվ. աշխ., էջ 41:*

[95] M. G i m b u t a s. Proto-Indo-European Culture: the Kurgan Culture during the Fifth, Fourth and Third Millennia B.C.– Indo-European and Indo-Europeans. Philadelphia, 1970, pp. 155, 156, 190; *Նույնի՝* Old Europe c. 7000 – 3500 B. C.: the Earliest European Civilization before the Infiltration of the Indo-European Peoples. – The Journal of Indo-European Studies, 1973, 1/1, pp. 1, 13, 16.

Դամբանաբլրային թաղումները հիշատակվում են վեդաներում[96], *հոմերոսյան պոեմներում*[97] *և դիցաբանական այլ աղբյուրներում, որոնցում դամբարանը պարզապես զուգադրվում է բլրի հետ: Դամբանաթմբային ծիսակարգը պայմանավորված է ննջեցյալների վերածննդի գաղափարաբանությամբ, իսկ դամբարանը համարվում է տիեզերքի մանրակերտը*[98]*:*

Միջինբրոնզեդարյան դամբանաբլուրների գագաթներին, սովորաբար, դրվել են ձևով և բարձրությամբ տարբեր բազալտե քարեր[99], *որոնք, ակներևաբար, զարգացած բրոնզի և հետագա դարաշրջաններում լայն տարածում ստացած հուշակոթողի նախատիպն են*[100]*: Հետաքրքիր է, որ արդեն միջին բրոնզի դարաշրջանում դամբանաթմբերի վրա, երբեմն, կանգնեցվել են նաև տարբեր տիպի քարե կոթողներ*[101]*: Հուշակոթողը, մասնավորաբար, այնկողմնային աշխարհի հետ հաղորդակցության միջոց էր*[102]*: Ժամանակի պատկերացումներում այն սերտորեն կապված էր* տիեզերական առանցքը *խորհրդանշող կենաց ծառի հետ*[103]*: Ի դեպ, ենթադրություն է արվել, որ ուշ բրոնզի դարաշրջանում եղել են նաև դամբանաբլուրների գագաթին ուղղաձիգ կանգնեցված փայտե սյուներ*[104]*: Ժայռաբեկորը, մենհիրը, սյունը, ինչպես և կենաց ծառը, կարող էին նպաստել ննջեցյալների վերածննդին, քանի որ ունեին* ծնելու *հատկություն*[105]*: Հները, հավանաբար, հուշակոթողն ընկալում էին որպես երկինք տանող ճանապարհ, այսինքն՝ նրանց պատկերացմամբ անդրաշխարհ-երկիր-երկինք անցումը կատարվում էր նաև հուշասյան միջոցով: Այսպիսով՝ հուշակոթողը վերածննդի կամ, այլ խոսքով, անմահության գաղափարի կրողն էր:*

---

[96] Ригведа, X, 18, 4; Атхарваведа, с. 380, прим. 67.

[97] *Իլիական. հին հունարեն բնագրից թարգմանեց Հ. Համբարձումյանը, Երևան, 1955, I, XXI, XXIII, XXIV: Ոդիսական, I, II, III և հտն.:*

[98] Е. А. Савостина. Сакральное пространство и погребальный обряд боспорских гробниц.– Исследования в области балто-славянской духовной культуры. Погребальный обряд. М., 1990, с. 241. *Հնարավոր է, որ դամբանասրահը խորհրդանշել է անդրաշխարհը, դամբանաբլուրը՝ երկիրը, իսկ հուշակոթողը՝ երկինքը (տե՛ս* Ю. А. Шилов. *Նշվ. աշխ., էջ 59):*

[99] *Գ. Թումանյան. Աշտարակի Խոջաբաղերի դամբանաթումբը դամբանաբլրային մշակույթի համատեքստում, էջ 187: Ս. Դևեջյան. նշվ. աշխ., էջ 62:* В. Э. Оганесян. *Նշվ. աշխ., էջ 27 և այլն:*

[100] *Հ. Ա. Մարտիրոսյան. Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր. Երևան, 1969, էջ 23: Գ. Արեշյան, Հ. Սիմոնյան. ԵՊՀ-ի հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի 1975 թ. կատարած հնագիտական աշխատանքները.– ԲԵՀ, 1976, -1, էջ 287, Գ. Ե. Արեշյան. Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների տասնամյակը.– Հայկական ՍՍՀ-ում 1983–1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. զեկուցումների թեզիսներ (այսուհետև՝ ԴՀԱԱ), Երևան, 1985, էջ 13:*

[101] *Գ. Ե. Արեշյան. Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների տասնամյակը, էջ 13: Գ. Արեշյան, Ե. Ասատրյան. Հայագիտական կենտրոնի 1979-83 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները.– ԲԵՀ, 1985, -3, էջ 203: Է. Խանզադյան. Լճաշենի վիշապը.– Հին Հայաստանի մշակույթը, XIII, Երևան, 2005, էջ 87-88:*

[102] М. И. Стеблин-Каменский. Комментарии.– В кн.: Старшая Эдда. Древнеисландские песни о богах и героях. М.–Л., 1963, с. 216.

[103] В. Н. Топоров. Древо мировое.– Мифы народов мира, т. 1. М., 1980, с. 398; М. Элиаде. *ЬЯн. ³ЯЛ., ¿з 169,* Э. Церен. Лунный бог, с. 138, 142.

[104] *Գ. Ե. Արեշյան. Պահպանական պեղումներ Քանագեղի դամբարանադաշտում.– ԴՀԱԱ, 1981, էջ 3:*

[105] Э. Церен. Лунный бог, с. 264.

Դամբարանի վրա հուշասյուն կանգնեցնելու սովորությունը հատկանշական է հոմերոսյան դարաշրջանին ևս[106]: Դամբարանադաշտերում ուղղաձիգ կանգնեցված զոհասյուների առջև, հավանաբար, կատարվել են ծիսապաշտամունքային արարողություններ[107]: Օրինակ՝ մահարձանի մոտ էին կատարվում կենդանիների զոհաբերման արարողությունները, որոնք ձոնված էին հանգուցյալի հիշատակին[108]: Կարմիր բլուրում, Մեծամորում, Շավարշավանում հայտնաբերված մարդակերպ կուռքերի վրա պատկերված կեռխաչերը հիմք են տվել Ս. Ա. Եսայանին ենթադրելու, որ հիշյալ մահարձանները ձոնվել են արևի և պտղաբերության պաշտամունքին, ինչպես նաև կապվել են «անդրշիրիմյան գաղափարի և հավատալիքի, թերևս առավել չափով մեռնող և հարություն առնող աստծո գաղափարի հետ»[109]: Ինչ վերաբերում է սյունաձև կոթողմենաքարերի (մենհիրների) նշանակությանը, ապա այդ մասին ևս հայտնվել են տարբեր կարծիքներ: Դրանք համարվել են մահացած նախնիների «կերպարներ» կամ պարզունակ կուռքեր[110], ենջեցյալների խորհրդանշական պատկերներ[111] և այլն:

Բրոնզեդարյան դամբարանային կառույցներն ամբողջությամբ հնագույն աշխարհընկալման արդյունք էին: Չևերի բազմազանությունից անկախ՝ դրանք միտված էին մահացածների ծիսական մաքրությունն ապահովելուն, որն իր հերթին պայմանավորված էր ենջեցյալների վերածննդի պատկերացումներով: Դամբարանը համարվում էր տիեզերքի մանրակերտ և ակնկալվում էր, որ հանգուցյալն այնտեղ անմահություն ձեռք կբերի:

ПОГРЕБЕНИЯ БРОНЗОВОГО ВЕКА В ПРЕДСТАВЛЕНИЯХ О СМЕРТИ И ОСОБЕННОСТИ ИХ СТРУКТУРЫ

ГАРЕГИН ТУМАНЯН

Р е з ю м е

Погребальное сооружение, в зависимости от идеологии данного времени и конкретного региона, в восприятии людей сопоставлялось с разными понятиями. Древнейшие могилы сопоставлялись с домом, храмом, утробой, островом, лодкой и т.д. Независимо от значения, приписываемого погребальному сооружению, одной из важнейших задач погребального обряда являлось обеспечение ритуальной чистоты усопшего. Выявленные раскопками данные позволяют

[106] *Իլիական, XXIII: Ոդիսական, XII, XIV:*

[107] К. Х. К у ш н а р е в а. Древнейшие памятники Двина. Ереван, 1977, с. 48.

[108] Г. К а р т е р. Гробница Тутанхамона. М., 1959, с. 16.

[109] *Ս. Ա. Ե ս ա յ ա ն. Հայաստանի ուշբրոնզեդարյան քանդակագործությունը (մ. թ. ա. XIV-X դդ.).– ԼՀԳ, 1975, -12, էջ 46, ն ո ւ յ ն ի՝* Древняя культура племен северо-восточной Армении. Ереван, 1976, с. 230.

[110] А. Л. М о н г а й т. Археология Западной Европы. Каменный век. М., 1973, с. 258.

[111] *Գ. Ե. Ա ր է շ յ ա ն. Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների տասնամյակը, էջ 13:*

восстановить некоторые ритуальные действия: разведение очищающего костра в погребальной камере, размещение там валунов, символизирующих воду, посыпания охры и осколков обсидиана и кремня, имеющие предназначение сберечь могилу от воздействий злых сил. Основываясь на изучении значений отдельных элементов погребальных сооружений– кромлехов, курганов, мемориальных стел и др.– можно сделать вывод об обусловленности структуры погребений мировоззрением современников и их представлениями о потустороннем мире.

BRONZE AGE TOMBS IN THE CONCEPTS OF DEATH AND THE PECULIARITIES OF THEIR STRUCTURE

GAREGIN TOUMANYAN

S u m m a r y

Based on the ideology of a given period and region, sepulcher was juxtaposed in human perceptions with different concepts. Ancient graves were compared to house, temple, womb, island, ship, etc. Regardless of the meaning ascribed to the sepulchral construction, ensuring the ritual purity of the deceased was one of the most important objectives of funerary rite. The data disclosed during excavations allow restoring ritual actions of making purifying fire in the funeral chamber, putting in it boulders symbolizing water, spreading ochre and chips of obsidian and flint aimed to protect the grave from the evil. Explorations of the meaning of individual elements of tombs – cromlechs, burial mounds, memorial steles, etc., allow arriving to a conclusion that their structure is stipulated by world-view of contemporaries and their beliefs of the beyond.